Կայսերական հրովարտակաւ ։ Այլ Յակոբ կաթուղիկոսն Էջմիածնի ոչ անսացեալ կայսերական հրամանին , սկիզբն արարեալ 'ի Կարնոյ , եհաս մինչեւ 'ի Զմիւռին քաղաք · ժողովելով զամենայն կաթուղիկոսական հաս , որք պատկանին Եղիազարու · և եղեւ մեզ զրկանք մեծ · խռովութիւն և երկպառակութիւն 'ի մէջ ժողովրդոց · այժմ ածցի այրն 'ի դատաստան 'ի ձեռն ատեկանի · և յետ օրինաւոր քննութեան , գրեսցի հաշիւ դրամոց ժողովելոց , և ըստ ցուցանելոյ հաշուոյն , տացեն հասոյթքն 'ի ձեռս Եղիազարու , եւ որ ինչ յաւելցի՝ տացի տումարակալին Դամասկոսի ։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի և առ դատաւորն Երուսաղէմի , առնել այնպէս , որպէս խնդրէինն · 'ի ١ Շէվվալ ամսոյ՝ ١٠٧٦ (1666) ։

Դարձեալ գիր գանկատանաց 'ի ժողովրդոց Կոստանդինուպօլսոյ եւ 'ի գլխաւորաց վեց եկեղեցեաց առ Եպարքոսն , վասն Կաթուղիկոսին Էջմիածնի և Նուիրակաց նորին, զի իւրաքանչիւրոք 'ի նոցանէ ասեն ժողովեալ աւելի քան զ10,000 դահեկանս տանին 'ի Պարսկաստան · զի 'ի ժամանել նոցա 'ի վանօրայս ուտեն և ըմպեն եւ կողոպտեալ զնոսա առաքեն յաշխարհն Պարսից , յորոց ծանրացան 'ի վերայ նոցա չարիք եւ անկարգութիւնք ։ Իսկ Եղիազար Կաթուղիկոս , որ խոստացաւ տալ 'ի գանձն Արքունի 15,000 փողս , սակս դիւրութեան և օգտի եկեղեցականաց , և ազատ պահելոյ 'ի վտանգէ կորստեան զամենայն կալուածըս , և ձրի բաժանելոյ զՄիւռոնն ։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի և առ դատաւորն նաիլ Եղիազարու յԵրուսաղէմ · օրհնել զՄիւռոնն , լինել խնամակալ , արգելուլ զՆուիրակս Յակոբայ Կաթուղիկոսին ։ Եւ յետ միոյ ամսոյ դարձեալ ամբաստանութիւն գլխաւորացն Հայոց 'ի Կոստանդինուպօլիս , զՆուիրակաց Էջմիածնի , զի բարձեալ էր սովորութիւնն չբաժանել նոցա զՄիւռոնն , այլ Յակոբ Կաթուղիկոս անսաստ գտեալ հրամանին , առաքէր զՆուիրակս , և առնոյր զտուրս 'ի Հայոց , զի Նուիրակունք ապականեն և կորուսանեն աւեն զկալուածս վանօրէից , և զկտակեալ ինչս գողացեալ տանին յաշխարհն Պարսից , եւ առ 'ի զերծ կացուցանելոյ զատացուածս Երուսաղէմի , զորս կտակաւ եդեալ եմք անդ , կարեւոր էր մեզ